

ԿՈՉԱԿԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԲԱՅԻ ԱՐԺՈՒՅԹԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բանասիր. գիտ. դոկտոր Գ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կոչականառությունը լեզվում շարահյուսական յուրօրինակ երևույթ է¹: Որպես համապատասխան միավոր՝ կոչականը հայ լեզվաբանների կողմից հնարավորինս հանգամանալից ուսումնասիրության նյութ է դարձել անցյալ դարում²: Հայերենում կոչականի մասին եղած կարծիքների, նրա ձևաբանական, շարահյուսական և ոճական բնութագրի մի յուրօրինակ ամփոփում է Խ. Բաղիկյանի «Կոչականը և նրա ուսուցումը» ուսումնասիրությունը, որտեղ հեղինակը փորձում է հիմնավորել շարահյուսական այդ իրողության նախադասության անդամ լինելու հանգամանքը նույնպես³: Նա կոչականի հարցին հանգամանորեն անդրադարձել է նաև երկու տասնամյակ հետո՝ այն դնելով արդեն նախադասության անդամների շարքում՝ իբրև տրոհվող անդամ⁴: Փորձ է արվել դարձյալ հիմնավորելու նրա՝ նախադասության անդամ լինելու հանգամանքը՝ գրելով, որ «...երկրորդ դեմքի հետ հանդես եկող կոչականները սերտորեն կապվում են բայերով արտահայտված ստորոգյալների հետ և ընկնում են բայերին հատուկ քերականական կարգերի՝ եղանակավորման, դեմքի, թվի, ինչպես նաև ժամանակի ոլորտներում»⁵:

Սպասելի էր, որ հետագա ուսումնասիրողները կա՛մ կմերժեն արտահայտված կարծիքը, կա՛մ կամրապնդեն նոր հիմնավորում-

¹ Կոչականառություն տերմինի առաջին գործածությունը տե՛ս Գ. Կ. Խաչատրյան, Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, Ե., 2000, էջ 26:

² Տե՛ս Վ. Գ. Ավագյան, Շարահյուսություն (Օժանդակ ձեռնարկ), Ե., 1983, էջ 83-85: Ռ. Ա. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն (Պարզ նախադասություն), Ե., 1986, էջ 280-283: Ս. Վ. Գյուլբուղադյան, Ժամանակակից հայերենի շարահյուսություն (Պարզ նախադասություն), Ե., 1988, էջ 249-255: Ս. Գ. Աբրահամյան, Հայոց լեզու (Շարահյուսություն), 7-8-րդ դաս. դասագիրք, Ե., 1997, էջ 153-157: Վ. Ա. Քոսյան, Կոչականի հետքերը հայերենում // «Պատմա-բանասիրական հանդես», 1974, 3, էջ 166-170:

³ Տե՛ս Խ. Գ. Բաղիկյան, Կոչականը և նրա ուսուցումը, Ե., 1982, էջ 17-39:

⁴ Տե՛ս Ա. Հ. Պապոյան, Խ. Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 183-194:

⁵ Խ. Բաղիկյանի 1982 թ. աշխատության մեջ կոչականը դիտվում է նախադասության անդամ: Տե՛ս Ա. Հ. Պապոյան, Խ. Գ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 186:

ներով՝ ըստ այնմ, որ կոչականը շարահյուսական համակարգում զբաղեցնի իր իրական տեղը. թե՛ նախկինում և թե՛ հետագայում կոչականի մասին եղած տեսակետը մնացել է նույնը⁶: Ավելին՝ կոչականը միջանկյալ և ներդրյալ բառերի, բառակապակցությունների և նախադասությունների հետ շարունակվում է դասվել նախադասության հարակից միավորների շարքը՝ բնորոշվելով ընդամենը որպես տրոհվող շարահյուսական միավոր⁷: Թեև լեզվաբանները խոսել են նաև կոչականի՝ նախադասության մյուս անդամների հետ ունեցած կապի մասին⁸, սակայն դրանում ոչ միայն փորձել են տեսնել յուրօրինակություն այդ կապն անվանելով հարակցություն կամ ընդհանրական շարահարություն տերմիններով⁹, և ոչ միայն լիարժեքորեն չեն հիմնավորել կոչականի՝ նախադասության անդամ լինել-չլինելու հարցը, այլև չեն դիտարկել կոչականի՝ նախադասության այլ անդամների հետ ունեցած կապը, կապակցման եղանակը և այլն: Հարկ է փաստել նաև, որ թե՛ ձեռնարկի համահեղինակները և թե՛ հետագա ուսումնասիրողները կոչականի՝ նախադասության անդամների հետ քերականական հարաբերությունների հարցը քննելիս անդրադարձել են միայն երկրորդ դեմքով արտահայտված ենթակա-ստորոգյալի հետ ունեցած կապին: Ավելին, առ այսօր դպրոցական դասագրքերում ձևակերպված է կոչականի՝ նախադասության անդամ չլինելու դրույթը:

Եվ ի լրումն կոչականի՝ նախադասության անդամ լինելու մասին արտահայտված կարծիքի՝ տողերիս հեղինակը երևույթին վերաբերող մի շարք հարցերի առումով առանձին հոդվածում հստակորեն ձևակերպել է հետևյալը. «Մերօրյա կոչականը նախադասության լիարժեք անդամ է և քերականական կապի մեջ է տվյալ նախադասության ստորոգյալի և իր հետ առարկայական կամ պարագայական հարաբերության մեջ գտնվող այլ անդամների, իսկ

⁶ Հմմտ *Ս. Վ. Գյուլբուդադյան*, նշվ. աշխ., էջ 249: Ռ. Իշխանյանը «Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը» աշխատության մեջ (Ե., 1971, էջ 42-43) կոչականը համարում է նախադասության անդամ, սակայն, այսուհանդերձ, հետագայում այն ուսումնասիրում է «նախադասությունը լրացնող անդամների» շարքում (տե՛ս *Ռ. Ա. Իշխանյան*, նշվ. աշխ., էջ 280): Վ. Գ. *Ավագյան*, նշվ. աշխ., էջ 83: *Ս. Գ. Աբրահամյան*, նշվ. աշխ., էջ 153:

⁷ Կոչականը նախադասության անդամ է համարում նաև Ռ. Իշխանյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 280), թեև, մեր կարծիքով, չի տալիս մի շարք հարցերի պատասխանը:

⁸ Ըստ Ս. Ասատրյանի «կոչականը նախադասության մյուս անդամներից տարբերվող և քերականական յուրահատուկ կապակցությամբ արտահայտվող նախադասության լիարժեք անդամ է»: *Ս. Ե. Ասատրյան*, Ժամանակակից հայոց լեզու: Շարահյուսություն, Ե., 1987, էջ 315):

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 315: *Ռ. Ա. Իշխանյան*, նշվ. աշխ., էջ 35:

2-րդ դեմքի ստորոգմամբ նախադասությունների մեջ՝ նաև ենթակայի հետ: Նկատելի է, որ նշված բոլոր դեպքերում կապակցումը տեղի է ունենում մասնական համաձայնության եղանակով»¹⁰:

Ավելին, նշվել է, որ իր կազմում կոչական ունեցող նախադասությունը ներկայացնում է ուղղակի խոսքի ոլորտը, որին, ինչպես հայտնի է, գրավոր (անհրաժեշտության դեպքում՝ նաև բանավոր) խոսքում սովորաբար նախորդում, ընդմիջարկում կամ հաջորդում է հեղինակի խոսքը:

Հարցն այս տեսանկյունից քննելով՝ պարզվում է, որ կոչականը նախադասության տարբեր անդամների հետ իմաստային և քերականական կապերի մեջ կարող է գտնվել ոչ միայն 2-րդ, այլև 1-ին և 3-րդ դեմքի ստորոգյալներով արտահայտված ուղղակի խոսքերում և վերջիններիս հետ հանդես եկող հեղինակի խոսքերում:

Ասվածը հիմնավորելու համար՝ 1. մի դեպքում բերենք տարբեր դիմային արտահայտությամբ ուղղակի խոսքերի օրինակներ, որոնցում, անկախ ստորոգյալի դիմային արտահայտությունից, կոչականները (ընդգծվում են) անմիջականորեն իրենց վերաբերող անդամների (ընդգծվում են) հետ գտնվում են շարահյուսական կապի մեջ՝ նրանց հետ կապակցվելով եզակի կամ հոգնակի թվի քերականական կարգի համաձայնության եղանակով: Ընդ որում՝ ա) 1-ին դեմքով ուղղակի խոսքեր. Քեզ մոտ *ես գալիս*, հայրենիք իմ հեզ (ՀԹ, 1, 61): *Իմ անգի՛ն, քեզ որտե՞ղ կգտնեմ* (ՎՏ, 2, 60): *Վառվում էս, Սո՛մա, մեր երակներում/ Դու որպես գինի.-/ Եվ քեզնով հարբած ուզում ենք մենք էլ, / Որ այս աշխարհում քո կամքը լինի* (ԵԶ, 174): *Հիշում եմ* դեմքը քո ծեր, / Մայր իմ, անուշ ու անգին (ԵԶ, 49) և այլն: բ) 2-րդ դեմքով ուղղակի խոսքեր. *Օ՛, Շամիրամ, ինչո՞ւ էս ինքդ քեզ ամբաստանում* (ՆԶ, 37): *Իմ հին և մըտերիմ գինակիցնե՛ր, / Դուք չունեի՞ք ոչինչ սրտանըվեր / Ընծայելու ձեր արքային* (ՆԶ, 40-41): *Նուա՛րդ, ների՛ր ինձ քո հոգով բարձրագրնա* (ՆԶ, 92) և այլն: գ) 3-րդ դեմքով ուղղակի խոսքեր. *Ինչո՞ւ ապշած են, լճա՛կ, Ու չեն խայտար քո այլակք* (ՊԴ, 48): *Լեռնե՛ր, ներշնչված դարձյալ ձեզանով, Թնդում է հոգիս աշխուժով լցված, / Ու ջերմ ըղձերս, բախտից հալածված, Ձեզ մոտ են թռչում* հախուռն երանով (ՀԹ, 1, 61): *Վառվող սիրտը*

¹⁰ Ավելի մանրամասն տե՛ս Գ. Կ. Խաչատրյան, Կոչականը ժամանակակից հայերենում // «Լեզու և լեզվաբանություն», 2006, 1, էջ 3-24:

քեզնից է միշտ աղբյուր ուզել, Սայաթ-Նովա, /2ի մեռնի են ժողովուրդը, որ քեզ նման սիրել գիտե (ՍԿ, 1, 38) և այլն:

2. Մյուս դեպքում բերենք տարբեր դիմային արտահայտություններ հեղինակային խոսքի օրինակներ, որոնց որոշ անդամների հետ, անկախ ստորոգյալի դիմային արտահայտությունից, ուղղակի խոսքի կազմում առկա կոչականները գտնվում են շարահյուսական կապի մեջ՝ թվի (եզակի կամ հոգնակի) կարգային բաշխմամբ¹¹: ա) Ուղղակի խոսքի հետ հանդես եկող 1-ին դեմքով հեղինակի խոսքեր. *Ես հարցրի* նրան. «Գևորգ, ինչպե՞ս պետք է անցնել գետը»: *Ամեն անգամ* նրանց նախատում էինք. «Տղանե՛ր, դուք հանիրավի մի՛ վիրավորեք ծերերին» և այլն: բ) Ուղղակի խոսքի հետ հանդես եկող 2-րդ դեմքով հեղինակի խոսքեր. *Դու շփոթված կանչեցիր* մեզ. «Արմեն, Գևորգ, դուք մոտեցե՛ք կամրջին»: *Դուք* ինձ հայտնեցիք. «Գևորգ, մենք վերադառնում ենք տուն» և այլն: գ) Ուղղակի խոսքի հետ հանդես եկող 3-րդ դեմքով հեղինակի խոսքեր. *Նա նույն ոգևորությամբ հարցրեց* քեզ. «Արամ, դու կուզենայի՞ր գնալ Արցախ»: *Նրանք փորձեցին հորդորել* ձեզ. «Մեծարգո՛ այրեր, մայրենի լեզուն հարկավոր է աչքի լույսի պես պահպանել» և այլն:

Բերված երկու խումբ նախադասությունների դիտարկումից պարզվում է հետևյալը. 1. Կոչականը քերականորեն կարող է կապակցվել ոչ միայն երկրորդ դեմքով արտահայտված ենթակա-ստորոգյալ գույգի, այլև ուղղակի և հեղինակային խոսքերի մեջ տեղ գտած այլ անդամների հետ նույնպես:

2. Նշված անմիջական և ոչ անմիջական, այն է՝ խորքային, բովանդակային քերականական կապերն իրականանում են կապակցվող գույգերի՝ թվի քերականական կարգով համաձայնությամբ:

2.1. Եզակի թվով հանդես եկող կոչականին վերաբերող ստորոգյալի ու ենթակայի և նախադասության այլ անդամների համար քերականական հարաբերությունների արտահայտման միջոց են ծառայում անձնական դերանունների եզակի թվի ուղիղ և թեք ձևերն ու վերջիններիս մասնակցությամբ ձևավորված կապական կառույցները: Օրինակ՝ *հայրենի՜ք - քեզ մոտ, նրան - Գևորգ ան-*

¹¹ Դրանք ուղղակի խոսքի կազմում գտնվող կոչականի համար յուրօրինակ բացահայտյալ են, որոնք երբեմն տեղ են գտնում խոսքում:

զի՛ն – քեզ, Նուա՛րդ – ների՛ր – քո, Սո՛ւա – քեզնով, Սոմա – քո, լճա՛կ – քո, մայր – քո, Սայա՛թ-Նովա -քեզնից, քեզ նման, Շամի-րա՛մ - ինքդ - քեզ - ամբաստանում ես, քեզ - Արա՛մ, ինձ - Գևո՛րգ – դու և այլն:

2.2. Հոգնակի թվով հանդես եկող կոչականին վերաբերող ստորոգյալի ու ենթակայի և նախադասության այլ անդամների համար քերականական հարաբերությունների արտահայտման միջոց են ծառայում անձնական դերանունների հոգնակի թվի ուղիղ և թեք ձևերն ու վերջիններիս մասնակցությամբ ձևավորված կապական կապակցությունները: Օրինակ՝ մեզ - Արմե՛ն, Գևո՛րգ - դուք - մոտեցե՛ք, նրանց - տղանե՛ր - դուք - մի՛ վիրավորեք, ձեզ - այրեր, զինակիցնե՛ր - դուք - չունեի՞ք - ձեր, լեռնե՛ր - ձեզնով, լեռնե՛ր - ձեզ մոտ և այլն:

Նշված փաստերն ինքնին վկայում են կոչականի՝ նախադասության լիարժեք անդամ լինելը, հակառակ դեպքում ինչպե՞ս մեկնաբանել այն, որ նախադասության անդամ չհամարվող շարահյուսական միավորը անմիջական կամ խորքային, բովանդակային քերականական կապ(եր)ի մեջ է նախադասության անդամ համարվող շարահյուսական միավորի հետ:

Սույն հոդվածով նպատակ ունենք ուսումնասիրելու ժամանակակից հայերենի դիմավոր բայի կապակցելիության արտահայտությունը կոչականի հետ, այլ կերպ ասած՝ քննության առարկա դարձնելու դիմավոր բայի արժույթի դրսևորումներից մեկը՝ կոչականառությունը¹², որով ևս ակնհայտ կդառնա կոչականի տեղը շարահյուսական համակարգում:

Հարկ ենք համարում շեշտել, որ հոդվածում ուսումնասիրության նյութ չեն դառնա՝ ա) անձնավորման դեպքերը, քանի որ այդ պարագայում իբրև կոչական կարող են գործածվել առարկա ցույց տվող բոլոր բառերը, բ) փոխաբերաբար գործածության դեպքերը, քանի որ այս դեպքում կոչականառությամբ կարող են աչքի ընկնել

¹² Հայերենում արժույթի արտահայտությանն առաջինն անդրադարձել է Գ. Ջահուկյանը՝ առանձնացնելով չորս դրսևորում՝ ենթակաառություն, ստորոգառություն, խնդրառություն, պարագաառություն (Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 467): Կոչականառությունը իբրև բայի կապակցելիության դրսևորում, առաջին անգամ ուսումնասիրության առարկա է դարձել տողերիս հեղինակի կողմից՝ ատենախոսության մեջ, որը հետագայում լույս է տեսել իբրև մենագրություն (Գ. Կ. Խաչատրյան, Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, Ե., 2000., էջ 26-28):

բոլոր բայերը, այդ թվում՝ նաև դիմաստիմանափականները, որի հետևանքով չենք ունենա կոչականի գործառույթով հանդես եկող բաների և կոչականառու բայերի իրական սահմանները: Մասնավորապես նկատի ունենք հետևյալ դեպքերը:

ա) Կոչականի դերում հանդես եկող իրանիշ կամ կենդանանիշ առարկաներին դիմում են նրանց համար բնութագրական գործողությամբ, սակայն այդ դիմումը ոչ թե իրական երկախոսության փորձ է, այլ անձնավորման հերթական դրսևորում¹³. Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ, *Դու գարնան սիրուն թռչնակ, / Դեպի ո՛ր, ինձ ասա, Թըռչում ես այդպես արագ* (ԵՐԳ, 459): *Կմենենմ, միայն թե դու դարերում ազատ խշշաս, / Իմ հեռո՜ւ, հեռո՜ւ, հեռո՜ւ Նաիրյան դաշար բարդի* (ՀՍ, 1, 98) և այլն:

բ) Կենդանանիշ կամ իրանիշ գոյականները գործածվում են իբրև կոչական, սակայն դրանց հետ 2-րդ դեմքով կապակցված բայերի միջոցով արտահայտված գործողությունն իրականում բնութագրական չէ կոչականի դերում գործածված կենդանանիշ կամ իրանիշ գոյականներին, այսինքն՝ անձնավորումից բացի առկա է նաև փոխաբերության երևույթը. *Է՛յ դու, ջահել, հպարտ հասակ, Թոար ոսկի աստղի պես* (ԱԻ, 1, 218): - *Էյ աստղե՛ր, աստղե՛ր, / Երկնքի աչքեր, / Որ այդպես վառ-վառ ժպտում եք պայծառ, / Ժըպտում էիք դուք, / Երբ ես դեռ մանուկ / Թըովորում էի / Ու ցավ չունեի* (ՀԹ, 2, 87): *Ա՛րի, բըլբուլ, խո՛սի բարըն, / Օխնըվի քու էկած սարըն* (Ս-Ն, 19):

Վերը նշեցինք, որ արժույթն ունի հինգ դրսևորում՝ ա) ենթակաառություն, բ) կոչականառություն, գ) ստորոգառություն, դ) խնդրառություն և ե) պարագաառություն¹⁴, որոնցից առաջին երեքի ուսումնասիրությունը հնարավոր է կատարել նախադասության մակարդակում, իսկ խնդրառության և պարագաառության ուսումնասիրությունը՝ թե՛ նախադասության և թե՛ բառակապակցության մակարդակներում: Բանն այն է՝ խնդիրներն ու պարագաները կարող են հանդես գալ ոչ միայն նախադասության, այլև բառակապակցության կազմում, քանի որ խնդրառությունը և պարագաառու-

¹³ Հարկ է նկատել, որ վերջին դեպքում էական տարբերություն կա ձեռնասուն և ոչ ձեռնասուն կենդանիների առումներով, որն առանձին ուսումնասիրության նյութ կարող է դառնալ:

¹⁴ Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 467: Գ. Կ. Խաչատրյան, Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, Ե., 2000, էջ 27-28:

թյունը կարող են իրականանալ թե՛ ստորոգման քերականական ակտի սահմաններում, թե՛ նրանից դուրս: Հմմտ. *Ես* հիշել եմ *այն ամառվա / Քո* ժպիտը - *Տխուր, Անթև* (ԵԶ, 214) *և* հիշել ժպիտը: *Լուսնյակ* զիշերով ես ճամփա ընկա (ԵԶ, 13) *և* զիշերով ճամփա ընկնել: Միշտ երագում *ես* տեսնում եմ *էն* հերոսին *ապագա* (ՀԹ, 1, 254) *և* միշտ երագում տեսնել հերոսին: Մինչդեռ բայի ենթակաառությունը, կոչականառությունն ու ստորոգառությունը դրսևորվում են միայն խոսքի մեջ, այն է՝ նախադասության կազմում, քանի որ անմիջական կապ ունեն ստորոգման քերականական ակտի հետ, որն իրականանում է միայն դիմավոր բայի միջոցով կամ նրա պարտադիր մասնակցությամբ¹⁵: Իր հերթին կոչականառությունն էլ ենթակաառությունից և ստորոգառությունից տարբերվում է նրանով, որ դրսևորվում է միայն ուղղակի խոսքի սահմաններում:

Ասվածից պարզ է դառնում, որ կոչականառությունը հատուկ է բային, ուստի կոչականառության մասին ասելիքն առավել որոշակի դարձնելու նպատակով անդրադառնանք ժամանակակից հայերենի բայերի դեմքի և թվի քերականական կարգերի արտահայտության հնարավորություններին: Դեմքի և թվի քերականական կարգերի արտահայտության տեսանկյունից ժամանակակից հայերենի բայերը բաժանվում են երկու խմբի՝ դիմասահմանափակ կամ անդիմասահմանափակ¹⁶:

1. Դիմասահմանափակ բայերը արտահայտության պլանում պակասավոր են, չունեն այս կամ այն դիմաթվային ձև(եր)ը: Դիմասահմանափակ բայերը կարող են արտահայտվել միայն եզակի թվի 3-րդ դեմքով, ինչպես՝ ամպեց, անձրևում էր, լուսանում է, մթնել է և այլն. Ամպեց, *կորավ լուսնկան, /Արտե՛ր, մտե՛ք քուն* (ՀՇ, 3, 239):

¹⁵ Այս դեպքում նկատի չունենք այն միակազմ նախադասությունները, որոնցում ստորոգումը կարող է արտահայտվել անդեմ բայերով: Դրանք բայական անդեմ միակազմ նախադասություններն են, որոնցում անորոշ դերբայի միջոցով կարելի է արտահայտել գերազանցապես 2-րդ, անհրաժեշտության դեպքում՝ նաև 1-ին կամ 3-րդ դեմքի քերականական իմաստ՝ անդեմ գործողությունը հնչերանգի միջոցով վերագրելով եզակի կամ հոգնակի առարկաների [ավելի հանգամանալից տե՛ս հեղինակիս «Դիմային հարաբերության արտահայտությունը բայական անդեմ նախադասությունների մեջ» հոդվածը (ՊԲԶ, 1990, թիվ 4, էջ 143-153)]: Ստորև բերենք միայն 2-րդ դեմքին վերագրվող գործողությամբ բայական միակազմ նախադասություններ, որոնցով, ի դեպ, ավելի շատ խոսքի ոճավորման նպատակ է հետապնդվում, քանի որ նմանատիպ կառույցները ժամանակակից հայերենին հարազատ շարահյուսական իրողություններ չեն. Ժողովի նախագահ Վարդան Վարդապետյանն ինձ դիմելով ասաց. - *Ընկե՛ր Ալազան, դահլիճը թողնե՛ լ* (= թողե՛ք) (ԳԹ): - *Հարձակվե՛ լ* (= հարձակվեցե՛ք - Գ.Խ.), *անմիջապես հարձակվե՛ լ*, - ասաց նա մոտը կանգնած ավագ և կրտսեր հրամանատարներին (ՍԶ, 139):

¹⁶ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 468:

Հուր կարոտով թռած իմ դեմ, / Լուսանում է ... ու չկա (ՀԹ, 1, 254):

Այս ենթախմբի բայերը հայտնի են նաև *միադիմի, անդեմ, արժութագուրկ* և այլ տերմիններով, հանդես են գալիս միայն միակազմ նախադասության մեջ՝ կատարելով գերադաս անդամի շարահյուսական գործառույթ: Քննելով դիմաստիմանափակ բայերի կոչականառությանը վերաբերող հարցը՝ նկատում ենք, որ, օրինակ, *անձրնել* բայը՝ ա) ըստ դասանշային արժեքի՝ հարաբերելի չէ անձնանիշ առարկա ցույց տվող ենթակայի հետ, բ) քերականորեն 3-րդ դիմային ձև ունենալով հանդերձ՝ չի կարող կապակցվել ենթակայի հետ, գ) 2-րդ դիմային ձև չունենալու պատճառով գուրկ է կոչականի հետ կապակցվելու հնարավորությունից (2-րդ դեմքով կարող է կապակցվել միայն փոխաբերաբար գործածվելու կամ էլ ինչ-որ առարկայի անձնավորման դեպքերում):

2. Անդիմաստիմանափակ են համարվում արտահայտության պլանում՝

2.1. բոլոր դիմաթվային ձևերն ունեցող բայերը, ինչպես՝ *բամբասել, բարձրանալ, երագել, թաքնվել, թռչել, կանգնել, կորչել, հանգստանալ, մաքրել, նայել, վագել* և այլն. Լալիս է *Անուշն երեսին ընկած*, Կանգնած են *շուրջը կանայք հարևան* (ՀԹ, 1, 94):

2.2. Այն բայերը, որոնք կարող են կապակցվել կենդանանիշ կամ իրանիշ գոյականների հետ. *արածել, բառաչել, դայլայլել, խրխնջալ, ծփալ, կայծկլտալ, կոնչալ, դունդունել, ճոճոալ, մայել, մլավել, շնկշնկալ, մոնչալ* և այլն. «Որքն» է *եղբորը կանչում ցավալուր*, *Բուն* է *իր դաժան վայրը* կոնչում (ՀԹ, 1, 85): Հասուն արտերը ծփում էին:

Վերջին ենթախմբի բայերը նույնպես դիմաստիմանափակ են, սակայն առաջինների նման հանդես են գալիս երկկազմ նախադասությունների մեջ՝ կատարելով տվյալ նախադասության գլխավոր անդամներից մեկի՝ ստորոգյալի շարահյուսական գործառույթը:

Բնականաբար, կոչականառության, հետևաբար նաև մեր այս ուսումնասիրության ուղեծրում մնում են միայն անդիմաստիմանափակ բայերը, սակայն վերջիններիս երկու խմբերի դիտարկումը ցույց է տալիս, որ կոչականով նախադասություններ կազմելու համար ոչ բոլոր անդիմաստիմանափակ բայերը և որոշ բայերի էլ ոչ բոլոր դիմավոր ձևերը կարելի է գործածել: Միաժամանակ նկատելի

է, որ բայերի արժույթի դրսևորումներից մեկը՝ կոչականառությունը, անմիջականորեն առնչվում է գոյականի դասանշային հատկությանը, ուստի անհրաժեշտ է հստակեցնել նաև այն հարցը, թե գոյականների դասանշային որ խմբերի հետ են առնչվում կոչականառության արժույթով օժտված բայերը:

Ըստ գոյականների դասային խմբերի հետ կապակցելիության հայերենի բայերն օժտված են՝ 1. Իրանշությամբ (կարող են կապակցվել թանձրացական առարկաների հետ). *Դեղին* սամովարը թշնում էր *տախտի ծերին* (ՀԹ, 3, 39): 2. Անձնանշությամբ (կարող են կապակցվել անձ ցույց տվող առարկաների հետ). - *Հանդգնեցի՞ր, ստրուկդ նենգ,* (ՎԴ, 2, 28): 3. Կենդանանշությամբ (կարող են կապակցվել կենդանի կամ թռչուն ցույց տվող առարկաների հետ). *Նո՛ւյն իմ ներսում հիմա, այս վայրկյանից, / Վրնջում են ձիե՛ր, Խրխնջում են ձիե՛ր* (ՊՍ, 2, 42): «*Գիքոր ջան, ... իմացած ըլես, որ Օաղիկը սատկեց*» (ՀԹ, 3, 52): 4. Վերացականությամբ (կարող են կապակցվել վերացական առարկաների հետ). *Գործն է անմահ, լա՛վ իմացեք, Որ խոսվում է դարեդար* (ՀԹ, 1, 185): 5. Մի խումբ բայեր էլ բնորոշվում են բազմադասությամբ (կարող են կապակցվել տարբեր դասային խմբեր ներկայացնող առարկաների հետ)¹⁷. *Կանգնի՛ր, քարավա՛նս, ինձի կըթվա, / Թե հայրենիքես ինձ մարդ կըկանչե* (ԱԻ, 1, 180): *Կաղնին էլ փրոեց ճյուղերն երկաթի / Ու էնպես հուժկու կանգնեց անտառում* (ՀԹ, 1, 245): - *Եվ Հիմալայը կանգնած է խրոխտ* (ԱԻ, 1, 180):

Ստորև կրնտրենք վերոնշյալ խմբերը ներկայացնող մեկական բայ (*հալվել, ասել, դալլալել, լսվել, բարձրանալ*)՝ պատասխանելու այն հարցին, թե կոչականառությամբ որ խմբերի բայերն են օժտված:

1. *Հալվել* բայը՝ ա) ըստ դասանշային արժեքի՝ հարաբերելի չէ անձնանիշ առարկա ցույց տվող ենթակայի հետ, բ) կարող է կապակցվել միայն 3-րդ դեմք ցույց տվող կամ պայմանականորեն այդպիսին համարվող իրանիշ ենթակայի հետ. Սառույցը հալվեց: *Երեկ ձյուն եկավ: Այսօր* այն հալվել է: գ) 2-րդ դիմային ձև չունենալու պատճառով գուրկ է կոչականի հետ կապակցվելու հնարավորությունից (2-րդ դեմքով կարող է կապակցվել փոխաբերաբար

¹⁷ Նույն տեղում, էջ 464:

գործածվելու դեպքում. *Օտարակա՛ն, հայրենիքի կարոտից հալվում էս*):

2. *Ասել* բայը՝ ա) ըստ դասանշային արժեքի՝ հարաբերելի է անձնանիշ առարկա ցույց տվող ենթակայի հետ. *Թուղթը վերցրեց ն կարդաց*. «Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կա» (Ն-Դ, 105). բ) բոլոր դիմաթվային ձևերով կարող է կապակցվել ենթակայի հետ. *Ասացի՝ ի մն էս*. *Ասացիր՝ քո նն էմ*. *Ու լուտ ենք հիմա ...* (ՊՍ, 2, 162): *Ասում են, թե՛ էն Փարվանա Ջահիլներն են սիրավառ* (ՀԹ, 1, 255). գ) հարկ եղած դեպքում 2-րդ դեմքով կարող է կապակցվել կոչականի հետ. *Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, էդ ի՛նչ էս ասում* (ՀԹ, 1, 181):

3. *Դայլայլել* բայը՝ ա) ըստ դասանշային արժեքի՝ հարաբերելի չէ անձնանիշ առարկա ցույց տվող ենթակայի հետ, բ) կարող է կապակցվել միայն 3-րդ դեմք ցույց տվող կամ պայմանականորեն այդպիսին համարվող կենդանանիշ ենթակայի հետ. *Թռչուններն անհոգ դայլայլում են*: գ) 2-րդ դիմային ձև չունենալու պատճառով զուրկ է կոչականի հետ կապակցվելու հնարավորությունից [2-րդ դեմքով կարող է կապակցվել անձնավորման հնարանք կիրառելու կամ փոխաբերաբար գործածվելու դեպքում. - *Եկ՛ դայլայլի՛ր, իմ անուշիկ, քո ձայնով նրբին* (ԳՀ): *Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգի՛ն, /Ժիր դայլայլի՛ր, ի՛մ սիրասուն*(ՍԿ, 8)]:

4. *Լսվել* բայը՝ ա) ըստ դասանշային արժեքի՝ հարաբերելի չէ անձնանիշ առարկա ցույց տվող ենթակայի հետ, բ) կարող է կապակցվել միայն 3-րդ դեմք ցույց տվող կամ պայմանականորեն այդպիսին համարվող իրանիշ ենթակայի հետ. *Լսվում էր կաղնիների շառաչը, որն ուժգին լինելու պատճառով կլսվեր նաև հեովի բարձունքներում*, գ) 2-րդ դիմային ձև չունենալու պատճառով զուրկ է կոչականի հետ կապակցվելու հնարավորությունից (2-րդ դեմքով կարող է կապակցվել փոխաբերաբար գործածվելու դեպքում՝ *Ջիլ հնչի՛ր, զա՛նգ, լսվի՛ր ամենուր*):

5. *Բարձրանալ* բայը՝ ա) ըստ դասանշային արժեքի՝ հարաբերելի է անձնանիշ առարկա ցույց տվող ենթակայի հետ, բ) բոլոր դիմաթվային ձևերով կարող է կապակցվել ենթակայի հետ. *Մենք բարձրացանք փայտե աստիճաններով*: Դու կբարձրանաս մոտակա բլրի գագաթը: *Լուսաբացին նա բարձրացավ կախադան* (ՎՏ, 2, 117): Պատատուկը բարձրացել էր ծառի բունն ի վեր և այլն: գ) հարկ

եղած դեպքում 2-րդ դեմքով կարող է կապակցվել կոչականի հետ. - Տղա՛ս, *բարձրացի՛ր*՝ որքան կարող ես, բայց երբեք չմոռանաս իջնելու հանգամանքը:

Վերոնշյալ հինգ խմբերից ընտրված բայերի մասին ասվածն ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ ա) կոչականառությունը սերտորեն առնչվում է բայի ենթակառության արժույթին, որովհետև այս կամ այն նախադասության կոչականը յուրօրինակ ձևով բացահայտում է ենթակայի ով լինելը:

բ) Կոչականառության արժույթով օժտված են միայն այն բայերը, որոնք դասանշային տեսանկյունից համադրելի են անձնանիշ ենթակաների հետ:

Քանի որ կոչականառությունն անմիջականորեն առնչվում է անձնանշությանը, բնական է, որ նշված հինգ խմբերից մեզ համար ուսումնասիրության առարկա կարող են դառնալ անձնանիշ առարկաների հետ կապակցման հնարավորությամբ օժտված բայերը, ընդ որում՝ 1. երկրորդ խմբի, այն է՝ անձնանշությամբ օժտված բոլոր բայերը. *աղոթել, ապաշխարել, ասել, բրդել, գովաբանել, դաստիարակել, երազել, ընծայել, խորհել, հաղորդել, հաստատել, հնձել, հրամայել, մտածել, վկայել* և այլն (սրանց ցույց տված գործողությունները հատուկ են միայն անձերին): Օրինակ՝ -Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, *էդ ի՛նչ* ես ասում (ՀԹ, 1, 81): - *Դե իմ անունով* երդվի՛ր, անզգամ, / *Որ էլ Սարոյին դու չես սիրելու* (ՀԹ, 1, 89): - *Դու* խաբո՞ւմ ես ինձ, սուտլի՛կ խաբեբա (ՀԹ, 1, 89):

2. Հինգերորդ խմբի, այն է՝ բազմադասության այն ենթախմբերի բայերը, որոնք, այլ առարկաներից բացի, աչքի են ընկնում նաև անձնանիշ առարկաների հետ կապակցելիության օժտվածությամբ: Դրանք այստեղ երկու ենթախումբ են:

2.1. *Անշնչանալ, արթնանալ, գողանալ, ընտրել, թռչել, լողալ, լսել, կանգնել, հեռանալ, մոտենալ, նայել, սողալ, սպանել, վազել, վախենալ, տեսնել, տրորել, քնել* և այլն (որոնց ցույց տված գործողությունները կարելի է վերագրել ոչ միայն կենդանանիշ, այլև անձնանիշ գոյականների): Հմմտ. *Մարդ* էր շինում նա *կավից, Որ ճաքում էր ծառավից* (ՀՇ, 2, 227) և *Ա՛խ, թըրի՛ր, ծիծեռնակ*, / Ծընած տեղս՝ Աշտարակ, / *Անդ շինիր քո բույնը Հայրենի կտուրի տակ* (ԵՐԳ, 459): Փախի՛ր *գիշերով* / *Ու թաքուն արի* (ՀԹ, 1, 100) և Փախի՛ր, այծյամ, փախի՛ր, *որսկանն է գալիս* (Ջ, 739):

2.2. Ավելանալ, բազմանալ, գլորվել, ընկնել, կտրել, մնալ, շատանալ, շարժվել, ջարդել, փաթաթվել, փակել, օրորվել և այլն (որոնց ցույց տված գործողությունները, կենդանանիշ ու իրանիշ թանձրացական և/կամ վերացական գոյականներից բացի, կարելի է վերագրել նաև անձնանիշ գոյականների): Օրինակ՝ - Ասպրամ, օդանցքը փակի՛ր,- կանչեց մայրը: Մի հսկա քար փակել էր մառունդի մուտքը: Շունը դանդաղորեն փակեց աչքերը:

Իբրև ամփոփում՝ հարկ ենք համարում նշել հետևյալը: Կոչականառությունը քերականական արժույթի արտահայտություններից մեկն է, այն հատուկ է միայն բային: Բայի կոչականառությունն ինքնին վկայում է կոչականի՝ նախադասության անդամ լինելու մասին: Այն ենթակաառության և ստորոգառության պես դրսևորվում է ոչ դիմասահմանափակ բայերի դիմավոր ձևերի տիրույթում, այլն իրականանում է համաձայնության եղանակով, որն արտահայտվում է ստորոգյալի և կոչականի թվի քերականական կարգերի համապատասխանությամբ (տեղի է ունենում մասնակի համաձայնություն), վերջապես՝ անմիջականորեն առնչվում է դասային արժեքներից մեկի՝ անձնանշության հետ (կոչականը ցույց է տալիս անձ կամ անձ դիտվող մեկ այլ առարկա), հետևաբար կոչականառու են այն բայերը, որոնք կա՝մ օժտված են անձնանշության դասային արժեքով, կա՝մ ներկայացնում են բազմադասության այն ենթախումբը (երբեմն էլ՝ ենթախմբերը), որոնցում դասային արժեքներից մեկը անձնանշությունն է: Մնացած բայերը կոչականառությամբ կարող են օժտվել առարկաների անձնավորման և առարկաների կամ բայերի փոխաբերաբար գործածության դեպքերում:

Համառոտագրություններ

ԱԻ – Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1973: ԳԹ – «Գրական թերթ»: ԳՀ – Գուսան Հավասի, «Խոսի՛ր, իմ սագս»: ԳՆՄ – Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Ե. 1985: ԵԲԳ – Երզարան, Ե., 1951: ԵՉ – Եղիշե Չարենց, Հատընտիր, Ե., 1977: ՀԹ, 1-3 – Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1-3, Ե., 1969: ՀՇ, 2-3 – Հովհաննես Շիրազ, Երկերի ժողովածու, հ. 2-3, Ե., 1982-1984: ՂԱ – Ղազարոս Աղայան, Հեքիաթներ, Ե., 1960: ՄՀԲ – Մարգարիտներ հայ քնարերգության, հ. Ա, Ե., 1971: ՆԴ – Նար-Դոս, Երկեր, Ե., 1977: ՆԶ – Նաիրի Զարյան, Արա Գեղեցիկ, Ե., 1946: ՊԲՀ – «Պատմա-բանասիրական հանդես»: ՊԴ – Պետրոս Դուրյան, Երկեր, Ե., 1981: ՊՍ, 1-2 – Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հ. 1-2, Ե., 1972: Ջ – Ջիվանու քնարը, Ե., 1959: ՍԶ – Ստեփան Զորյան,

Երկերի ժողովածու, հ. 7, Ե., 1962: ՍԿ – Սիլվա Կապուտիկյան, Հայերգություն, Ե., 2010: Ս-Ն – Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Ե., 1963: ՎԴ, 2 – Վահագն Դավթյան, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1973: ՎՏ, 2 – Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1961:

Г. К. Хачатрян – Связь с вокативом как выражение валентности глагола в современном армянском языке. Одним из выражений валентности является способность устанавливать связь с вокативом, и присуща она только глаголу. Подобно связи между подлежащим и сказуемым или между связкой и предикативом, связь между сказуемым и вокативом реализуется у неограниченных категорией лица личных форм глагола посредством согласования их по числу (имеет место частичное согласование). Связь с вокативом непосредственно зависит от лексико-семантического разряда вокатива, который обычно указывает на лицо. Следовательно, связь с вокативом могут реализовать лишь те глаголы, которые: а) наделены способностью указывать на лицо; б) относятся к той группе или подгруппе, среди категориальных свойств которых имеется указание на лицо также. Остальные глаголы могут устанавливать связь с вокативом лишь при олицетворении вокатива или при переносном употреблении глагола.

G.K. Khachatryan – Connection with Vocative as an Expression of Verb Valency in Modern Armenian. One of the characteristic features of valency is the ability to connect with the vocative, which is typical only to the verb. Like the connection between the subject and the predicate or between the copula and the predicative, the connection between the predicate and the vocative is realized by the personal forms of the verbs possessing unlimited categories of person through their number concord (sometimes through partial concord). The connection with the vocative directly depends on lexico-semantic category of the vocative, which usually indicates the person. Consequently, the connection with the vocative can be realized only by the verbs, which а) are characterized by the grammatical category of relating to the person; б) represents the group or subgroup one of the categorical properties of which is referring to the person. The rest of the verbs may be connected with the vocative in case of the personification of the vocative and the figurative usage of the verb.